Ամսոյս 11 ին ժամը 1. Վեհափառ Տ. Տ. Մակար Սրբազնագոյն Կաթուղիկոսն ամենայն Հայոց Իւր մօտ կոչելով Մայր Աթոռոյս Միաբանութիւնն, յայտնեց թէ պիտի առ ժամանակ մի բացակայէ Ս. Էջմիածնից գնալ ի Տփխիս. վանքի ներքին և արտաքին կառավարութիւնն յանձնեց Գեր. Երեմիա Եպիսկոպոսին, և յորդորեց իւրաքանչիւր պաշտօնատեարց արթուն լինել իւրեանց պաշտօնի մէջ, ապա ինչպէս ցարդ արթնութեամբ և հաւատարմութեամբ գոհ արած էք զիս, ջանացէք որ իմ բացակայութեանս ժամանակ աւելի գոհ անէք, օրհնեց ամենին Հայրական օրհնութեամբ, և ապա իջնելով ի Մայր Տաճարն՝ մատոյց իւր աղօթքըն և երկրպագելով Իջման տեղւոյն դուրս եկաւ հանդիսով, և օրհնելով զանգակի ազդարարութեամբ հաւաքուած խուռն բազմութիւնը Ճեմարանի աշակերտաց և միաբանութեան ուղեկցութեամբ հասնելով վանուց հիւսիսային դուռն նստեց հայրապետական կառքն ու մեկնեցաւ ժամը 2ին դէպի Երևան, և անտի 13ին ի Տփխիս։

Վեհ. Հայրապետն բարեհաճեց իւր հետ տանել Գեր. Թադէոս Արքեպիսկոպոսին, Գեր. Աղափիրեան Գրիգոր Եպիսկոպոսին, Արժ. Սահակ Վարդապետ Բաղդասարեանցին և Սինօդի Թարգ. Պ. Ռուբէն Մէլիք Ադամեանցին, երկու շաթիրներին և իւր սպասաւորներին։

Վեհ. Հայրապետին ուղեկցեցին մինչ յԵրևան Գեր. Ներսէս և Սարգիս Եպիսկոպոսներ։